Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
նոյեմբերի 21-ի N 1815 - Ն որոշման

# Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

## ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԸՆՏԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԻ ԽՈԶԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետություն ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ծածկագրին դասվող ընտանի տեսակների կենդանի խոզերի (այսուհետ՝ ապրանք) ներմուծման ժամանակ ծագող հարաբերություն-ները:

2. Երրորդ երկրներից ապրանքի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակ հայտատուն Եվրասիական տնտեսական միության մաք-սային օրենսգրքով սահմանված ժամկետին համապատասխան մաքսային մարմին է ներկայացնում ապրանքի մաքսային հայտարարագիրը:

3. Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետու-թյունների տարածքով Եվրասիական տնտեսական միության անդամ պետու-թյուններից «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգի կիրառմամբ Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում նշված ընթացակարգի գործողությունը ավարտելու նպատակով մաքսային մարմնի տեղեկատվական համակարգի միջոցով «Մաքսային տարանցում» ընթաց-կարգի գործողության ավարտի ձևակերպումը դիտվում է որպես լիազոր մարմնի կողմից տրամադրված թույլտվություն՝ սույն որոշման կիրառման մասով:

4. Սույն ընթացակարգի 2-րդ կետով նախատեսված հայտարարագրի՝ մաքսային մարմինների կողմից հայտարարագրման ավտոմատ համակարգում

գրանցումը դիտվում է որպես լիազոր մարմնի կողմից տրամադրված թույլտվություն՝ սույն որոշման կիրառման իմաստով:

5. Սույն որոշմամբ նախատեսված նպատակների կիրառման համար նախնական մաքսային հայտարարագրման դեպքում ապրանքի հայտարարագրի գրանցում է համարվում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 114-րդ հոդվածի 3-րդ կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված տեղեկությունների ներկայացման արդյունքում մաքսային մարմինների կողմից նախնական մաքսային հայտարարագրում ճշգրտումների (փոփոխությունների, լրացումների), ապրանքների հայտարարագրում փոփոխություններ (լրացումներ) կատարելու անհրաժեշտության բացակայության մասին ծանուցման գրանցումը:

6. Սույն ընթացակարգին համապատասխան լրացված ապրանքների մաքսային հայտարարագրի գրանցումը կամ սույն ընթացակարգի 3-րդ և 5-րդ կետերում նշված գործողությունների իրականացումը մերժվում է, եթե որոշմամբ նախատեսված ապրանքի քանակը սպառվել է նշված փաստաթղթերի գրանցման կամ բացթողման պահի դրությամբ:

7. Սույն որոշման կիրառման իմաստով մաքսային մարմինների կողմից թույլտվության տրամադրումն իրականացվում է ժամանակագրական սկզբունքով, հերթականությամբ՝ հիմք ընդունելով մաքսային հայտարարագրերի գրանցման կամ սույն ընթացակարգի 3-րդ և 5-րդ կետերում նշված գործողությունների իրականացման պահը, իսկ դրանց քանակական հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ հայտարարագրման համակարգի կիրառմամբ: Սույն ընթացակարգի 2-րդ և 5-րդ կետերով նշված փաստաթղթերի միաժամանակ գրանցման և 3-րդ կետում նշված գործողությունների միաժամանակ իրականացման պարագայում սակագնային արտոնությունը տրամադրվում է առավել վաղ գրանցված համապատասխան փաստաթղթերով կամ առավել վաղ կատարված գործողություններով ապրանքների ներմուծմանը:

8. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում

սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ամսական պարբերականությամբ՝ յուրաքանչյուր ամսվա համար Հայաստանի Հանրապետության տարածք ապրանքի ներմուծման մասին տեղեկատվություն՝ մինչև հաջորդող ամսվա 15-ը, ինչպես նաև պաշտոնական կայքում տեղադրում է տեղեկատվություն՝ յուրաքանչյուր ամսվա ընթացքում ներմուծված ապրանքի քանակի վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

21.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ